Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 4-ի N 1444- Ն որոշման

«Հավելված N 7
ՀՀ կառավարության 2008 թվականի
հունիսի 5-ի N 853-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ՝ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նախարարություն), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կարիքների համար պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող առանձին ապրանքատեսակների՝ կենտրոնացված կարգով գնման գործընթացի կազմակերպման կարգը։

2. Գնման ընթացակարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող առանձին ապրանքատեսակների՝ կենտրոնացված կարգով գնման գործընթացի կազմակերպման հետ կապված՝ սույն կարգով չնախատեսված նորմեր։

II. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Կենտրոնացված կարգով կազմակերպվում են այն ապրանքների գնման գործընթացները, որոնք ներառված են նախարարության, ոստիկանության և ծառայության

ղեկավարների համատեղ հրամանով հաստատված՝ կենտրոնացված կարգով գնվելիք ապրանքների անվանացանկում (այսուհետ՝ անվանացանկ)։ Ընդ որում, հաստատված անվանացանկում ներառված ապրանքների տեխնիկական հատկանիշները (բնութագրերը) նախարարության, ոստիկանության և ծառայության համար պետք է հնարավորինս միանման լինեն։

4. Գնման պահանջի ծագման օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ոստիկանությունն ու ծառայությունը կազմում և նախարարություն են ներկայացնում գնման հայտերը՝ ըստ գնման առարկայի տեխնիկական բնութագրի, քանակի, մեկ միավորի նախահաշվային արժեքի, մատակարարման վայրի, վճարումների կատարման ժամկետների, պատասխանատու ստորաբաժանման (հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրողի), իսկ անհրաժեշտության դեպքում՝ մատակարարվելիք ապրանքի որակի գնահատման նպատակով նաև մատակարարի կողմից փորձագիտական եզրակացություն ներկայացնելու պահանջի։ Մրցութային կամ առաջարկները գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով գնման հայտի հետ միաժամանակ նախարարություն է ներկայացվում նաև մեկ անձի թեկնածություն։

5. Անվանացանկում ներառված ապրանքների գնման գործընթացները, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան, կազմակերպում և գնման պայմանագրերը կնքում է նախարարությունը։ Ընդ որում, հնարավորության դեպքում ոստիկանության և ծառայության կարիքների համար գնվելիք ապրանքները համախմբվում են նախարարության կարիքների համար գնվելիք նույն ապրանքի խմբաքանակի հետ՝ կազմակերպելով գնման մեկ գործընթաց։ Գնման ձևն ընտրում է նախարարությունը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները։

6. Նախարարությունը կամ մրցութային հանձնաժողովը պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումներին մասնակցելու իրավունք ունեցող մասնա-

կիցների որոշման մասին հայտարարության և (կամ) հրավերի հաստատման ժամանակ հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝

1) եթե գնվելիք ապրանքներն ունեն միևնույն բնութագրերը, ապա գնման գործընթացը կազմակերպվում է մեկ չափաբաժնով։ Հակառակ դեպքում գնման գործընթացը կազմակերպվում է ըստ չափաբաժինների։ Ընդ որում, ոստիկանության և ծառայության կարիքների մասով գնման պայմանագիրը կամ գլխավոր պայմանագրի շրջանակում առանձին համաձայնագիրը կնքվում է՝ հիմք ընդունելով այդ մարմինների ներկայացրած գնման հայտերով նախատեսված պայմանները, այդ թվում՝ մատակարարվելիք ապրանքների քանակները, ժամկետները և վայրերը.

2) ոստիկանության և ծառայության կարիքների մասով կնքվելիք պայմանագրով նախատեսվում է, որ ապրանքի հանձնման-ընդունման ակտերն ստորագրում են այդ մարմինների պատասխանատու ստորաբաժանումների ներկայացուցիչները՝ հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված պայմանները։ Վերջիններս են գնահատում մատակարարված ապրանքի համապատասխանությունն իրենց կողմից նախարարություն ներկայացված գնման հայտին և համապատասխանության դեպքում ընդունում են այն։ Անհամապատասխանության դեպքում ապրանքը չի ընդունվում, և կիրառվում են պայմանագրով նախատեսված համապատասխան նորմերը.

3) ոստիկանության և ծառայության կողմից ներկայացված առաջարկություններին համապատասխան՝ պայմանագրի կողմի նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև պայմանագրի լուծման լիազորություններն իրականացնում է նախարարությունը՝ բացառությամբ մատակարարին վճարման ենթակա գումարներից հաշվարկման և հաշվանցման ենթակա տույժերի և տուգանքների գումարի.

4) ոստիկանության և ծառայության մասով մատակարարված ապրանքների դիմաց, կնքված պայմանագրի համաձայն, մատակարարին գումարները վճարում են համապատասխանաբար ոստիկանությունը և ծառայությունը։

7. Սույն կարգով կարող են իրականացվել նաև այլ պետական կառավարման մարմինների կարիքների համար՝ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող ապրանքների ձեռքբերման գործընթացները։ Այդ նպատակով տվյալ մարմնի և նախարարության ղեկավարների համատեղ հրամանով հաստատվում է տվյալ մարմնի կարիքների համար կենտրոնացված կարգով գնվելիք ապրանքների անվանացանկը։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ